ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 4 >> ապրիլի 2019 թվականի N: 103-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԲԵՌԼԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «իա» ենթակետի, 84-րդ հոդվածի 1-ին կետի «իգ»,«իդ» ենթակետերի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 4-ի N 259-Ա հրամանով հաստատված հավելվածի 7-րդ կետը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերության) 2019 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) Ընկերության 2019 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ընկերության տնօրենի վարձատրության չափը սահմանել ամսական 380000 Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝